ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30 նոյեմբերի 2022թ.

Նախագահ՝ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար՝ Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 14 անդամները :

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների, ստուգարքների ժամանակացույցների հաստատում (զեկուցող՝ Մ.Զաքարյան):
2. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում (զեկուցող՝ Մ.Զաքարյան):
3. Հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցների հաստատում (զեկուցող՝ Մ.Զաքարյան):

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

Հաստատել նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին՝ «2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների, ստուգարքների ժամանակացույցների հաստատում», հարցի մասին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ.Զաքարյանը նշեց, որ ըստ

հաստատված ժամանակացույցի՝ Բնական գիտությունների ֆակուլտետի՝ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումներն ու քննությունները, ստուգարքներն անցկացվելու են 2022թ. դեկտեմբերի 22-29-ն ընկած ժամանակահատվածում: Նախապես կազմվել են բոլոր գրաֆիկները, դրանք քննարկվել են Ծ/ԻՏ և ԸՄԲ ամբիոններում և կատարվել են անհրաժեշտ փոփոխությունները: Ժամանակացույցների շտկված տարբերակները այժմ ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ.Սիմոնյանը, Ա.Հովակիմյանը, Մ.Ճաղարյանը:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/2

Հաստատել 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների, ստուգարքների ժամանակացույցները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ՝ «2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում , հարցի վերաբերյալ Մ. Զաքարյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանը անցկացվելու է 2023 թ. հունվարի 4-24-ը:» Քննաշրջանի ժամանակացույցները քննարկվել են Ծ/ԻՏ և ԸՄԲ ամբիոններում և կատարվել են անհրաժեշտ փոփոխությունները: Ժամանակացույցների շտկված տարբերակները այժմ ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ.Սիմոնյանը, Ա.Հովակիմյանը, Մ.Ճաղարյանը:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/3

Հաստատել 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ ՝ *« Հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցների հաստատու»* հարցի մասին զեկուցող Մ.Զաքարյանը նշեց, որ հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումները և քննությունները, ըստ գործող ժամանակացույցի, կիրականացվեն 2022թ. դեկտեմբերի 13-24-ն ընկած ժամանակահատվածում:

Կազմված գրաֆիկները քննարկման և շտկման նպատակով ուղարկվել են ամբիոններ, դրանց մասին իրազեկվել են հեռակա ուսուցման համակարգում դասավանդող դասախոսները և ուսանողները: Այդ գրաֆիկների փոփոխված տարբերակները ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

Առցանց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/4

Հաստատել հեռակա ուսուցման՝ 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցները:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ